Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ *Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում*

Հաստատություն՝ Ռոզելիտա

Դաստիարակ՝ Կարինե Դայան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

1. **Դաստիարակությունը որպես օբյեկտիվ երևույթ, ուսումնական հաստատության և ընտանիքի դերը երեխայի դաստիարականության գործում----------4**
2. **Մանկապարտեզ-ծնող համագործակցության ժամանակակից տարբերակները----------7**
3. **Մանկապարտեզ-ընտանիք արդյունավետ հաղորդակցման մի քանի գործնական օրինակներ----------10**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը յուրաքանչյուր նախադպրոցական հաստատության աշխատանքի կարևորագույն ու առանցքային կետերից է: Ապացուցված է երեխաները լավ են սովորում այն միջավայրում, որտեղ բավարարվում են նրանց ֆիզիկական և հոգեբանական կարիքները, որտեղ նրանք իրենց պաշտպանված են զգում, գնահատվում են որպես յուրահատուկ անհատներ և ակտիվորեն ներգրավվում հմտություններ և գիտելիքներ ձեռք բերելու նպատակով կազմակերպված խաղերում և աշխատանքներում: Իսկ ծնողները, գաղտնիք չէ, որ երեխայի առաջին ուսուցիչներն են: Ուստի որքան ներգրավված լինեն նախադպրոցական ուսումնական հատատության աշխատանքին, այնքան կշահեն նախադպրոցական կրթությանը ներգրավված մասնակիցները. երեխան իրեն ապահով կզգա, դաստիարակը կճանաչի իր սաներին ու նրա միջավայրը, իսկ ծնողը՝ հնարավորություն է ունենում այլ միջավայրում, հանգամանքներում հաղորդակցվել իր երեխայի հետ, վստահել սեփական կարողություններին: Վերոբերյալներն, անխոս, խոսում են թեմայի արդիականության ու կարևորության մասին:

Հետազոտական աշխատանքի նպատակն է.

- Ուսումնասիրել մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը կրթության կազմակերպման ու դաստիարակության հարցերում:

Աշխատանքի խնդիրներն են.

- ✓ Ներկայացնել ընտանիքի դերը երեխայի դաստիարակության գործում,
- ✓ Ներկայացնել ընտանիք-նախադպրոցական ուսումնական հաստատություն համագործակցության կարևորությունը,
- ✓ Քննել ժամանակակից մանկավարժության կողմից առաջարկվող համագործակցության նպատակահարմար ուղիները,
- ✓ Ներկայացնել սաների ընտանիքի հետ համագործակցության սեփական հաջողված փորձը:

1. Դաստիարակությունը որպես օբյեկտիվ երևույթ, ուսումնական հաստատության և ընտանիքի դերը երեխայի դաստիարականության գործում

Դաստիարակություն, որոշակի տեխնոլոգիաների համակարգ է, որն ուղղված է երեխայի անձի նպատակաուղղված ձևավորմանը՝ հասարակական, արտադրական, մշակութային կյանքին նախապատրաստելու համար: Դաստարակությունը իրականացվում է ընտանիքի, նախադպրոցական ուսումնական հաստատությունների, դպրոցների, արտադպրոցական, երիտասարդական խմբակների և այլնի համատեղ ջանքերով:

Դաստիարակությունը հասարակական կյանքի կազմակերպման համընդհանուր անհրաժեշտ կատեգորիա է, որ սերտորեն կապված է ուսուցման հետ: Դաստիարակության առաջնային օղակը, որտեղ ձևավորվում է մարդը իր գոյության առաջին իսկ պահից, ընտանիքն է, որի հետ համագործակցում ու գործը <<շարունակում>> են հասարակական մյուս ինստիտուտները՝ նախակրթարան, դպրոց, հասարակական, երիտասարդական կազմակերպություններ և այլն:

Ըստ էության դաստիարակության բովանդակությունը, մեթոդներն ու ձևերը պատմականորեն պայմանավորված են հասարակարգի առջև ծառացած խնդիրներով և շահերով: Նրա նպատակներն ու խնդիրները որոշվում են հասարակական հարաբերություններով:

Դաստիարակության տեսությունն ուսմունք է դաստիարակության երևույթների, փաստերի, դրանց արտաքին ու ներքին կապերի, դաստիարակության սկզբունքների ու մեթոդների, դաստիարակության բովանդակության ու օրինաչափությունների, դաստիարակության կազմակերպման ձևերի մասին[1]:

Դաստիարակության պրոցեսում նոր սերունդները յուրացնում է նախորդների կողմից ստեղծված փորձն ու գիտելիքը, տիրապետում է որոշակի կարողությունների, յուրացնում հասարակության վարքային նորմերն ու փորձը և մշակում կյանքի մասին հայացքների որոշակի համակարգ:

[1] Զաղոյան Ա. Մ., Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձեվավորման գործում/ Մանկավարժություն N 1 ՀՅԴ 373 Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, 2014, էջ 17:

Յուրաքանչյուր անձի ձևավորման, ֆիզիկական և մտավոր զարգացման գործընթացում ընտանիքը, ծնողներն ունեն անփոխարինելի դեր. այս միջավայրում է տեղի ունենում երեխայի առաջնային սոցիալականացումը, ձևավորվում դերային և վարքագծային կարծրատիպերը, արժեքային կողմնորոշումն ու աշխարհայացքը: Առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի անվտանգության, կարիքների մասին, կրթում ու դաստիարակում նրան, հոգեբանական աջակցություն ցուցաբերում, հարմարավետություն ու ապահովություն տալիս անձի ֆիզիկական ու հոգեբանական զարգացման համար: Ազնվությունը, մարդասիրությունը, բարությունը, կենցաղային խնդիրներին դիմագրավելու կարողությունը ձևավորվում են միայն այն դեպքում, երբ երեխան մանկուց ականատես է եղել անկեղծ ու ջերմ մարդկային հարաբերությունների, ինչը ակնկալվում է առաջին հերթին ընտանիքում[2]:

Իսկ ընտանիքում առկա սոցիալտնտեսական և հատկապես հոգեբանական բնույթի խնդիրները՝ ծնողների անտարբերությունը միմյանց և երեխաների նկատմամբ, ձևական բնույթ կրող՝ «հանուն երեխայի» հարաբերությունները, հաճախակի կրկնվող վիճաբանությունները, հանդուրժողականության պակասով պայմանավորված՝ «սերունդների կոնֆլիկտը», բռնությունը հանգեցնում են մանկահասակ երեխաների կողմից շեղվող, իսկ առանձին դեպքերում՝ հանցավոր վարքագծի դրսևորման: Դաստիարակության պրոցեսի մանկավարժական ղեկավարումն ամենից առաջ ուղղված է այն բանին, որ ընտանիքում և հասարակության մեջ ևս շարունակվի և ամրապնդվի այն, ինչ անում է կրթական հաստատությունը՝ ձևավորելով երեխայի աշխարհայացքը: Ահա այստեղ է մանկավարժի աշխատանքի անգնահատելի դերը, եթե այն կազմակերպված է գրագետ և ունի մոտեցման ճիշտ ձև: Վերջինս առանձնակի մեծ դեր է կատարում ապագա սերնդի դաստիարակության բարդ ու պատասխանատու գործում՝ մանկապարտեզի, ընտանիքի ու հասարակության ջանքերը համախմբելու ուղղությամբ: ՈՒսումնական հաստատության, առավել ևս դաստիարակի, կարևորագույն խնդիրը ծնողներին և ընտանիքին երեխաների դաստիարակությանը մասնակից դարձնելն է: Նպատակահարմար է ՆՈՒՀ-ում մշտապես կազմակերպել ծնողական ժողովներ, հանդիպումներ, խորհրդատվություններ, տարբեր հետաքրքրաշարժ միջոցառումներ, աշխատանքներ, որոնք կնպաստեն ընտանիքի մասնակցությանը երեխաների դաստիարակությանը՝ նրանց ուսումնական յուրաքանչյուր օրը դարձնելով տոն: Դա ևս կնպաստի, ավելի կխորացնի ու կամրապնդի ընտանիք-դպրոց կապը:

[2] Զադոյան Ա. Մ., նշվ. աշխ., էջ 25:

Բացի այդ, անհրաժեշտ են ծնողների և երեխաների համատեղ ստեղծագործական, մասնագիտական կողմնորոշման հարցերի հետ կապված հանդիպումների կազմակերպումը՝ նվիրված ընտանեկան լավագույն ավանդույթների, սովորությունների ներկայացմանը: Սաների համար դեռ մանկապարտեզում պետք էինարավորություն ստեղծել ծանոթանալու ծնողի ընտրած մասնագիտության առավելություններին ու դժվար կողմերին, կողմնորոշվի իր նախասիրությունների մեջ, ճանաչել սեփական անձը, մեծանալ ինքնաբավ:

Ադլիրի բառերով ասած՝ <<Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջականությունից է կախված մարդկային ամբողջ մեծ հասարակության անվտանգությունը>>[3]:

Անձնական շատ դժբախտությունների արմատները թաղված են հենց այնտեղ, ուր ծնողները երեխային մանկությունից չեն սովորեցրել ղեկավարել սեփական ցանկությունները, չեն սովորեցրել ճիշտ վերաբերվել <<կարելի է>>, << չի կարելի>>, <<հնարավոր է >>, հասկացություններին: Ուստի դեռ նախադպրոցական կրթական հաստատությունները պետք է պարարտ հող նախապատրաստեն ծնող-երեխա հարաբերություններում վստահության, համագործակցության և փոխօգնության մթնոլորտ հաստատելու ուղղությամբ: Հաճախ ընտանեկան դաստիարակության շատ անհաջողություններ բացատրվում են ծնողների անբավարար մանկավարժական գրագիտության և երեխաների դաստիարակության համար ծնողների անհրաժեշտ փորձի բացակայությամբ: Ուստի, մանկավարժի գերխնդիրն է՝ օգնել ծնողներին գտնելու երեխաների դաստիարակության այնչափ կարևոր ուղին:

Այսպիսով, սովորողների նկատմամբ տարվող դաստիարակչական համալիր գործունեությունը, որ իրականացվում է մանկապարտեզ-ընտանք ինստիտուտների ջանքերով արժեքահեն դաստիարակության, անձի ճիշտ ձևավորման ու զարգացման լայն հնարավորություններ է ընձեռում: Հենվելով մանկական կոլեկտիվի վրա, նախադպրոցական ուսումնական հաստատությունում մանկավարժական թիմի համագործակցության վրա, մասնակից դարձնելով սաների ծնողներին ՆՈՒՀ-ը կարող է լուրջ ներդրում կատարել՝ հոգեկան հարստությունը, բարոյական անաղարտությունն

[3] Մանկության հիմնախնդիրները ժամանակակից հայ ընտանիքում, 21-րդ դարի մարտահրավերները, կանխման և հաղթահարման ուղիները, գիտաժողովի նյութերի ժողովածու, <<Մանկավարժ>> հրատ., Ե., 2016, էջ 27:

ու ֆիզիկական կատարելությունը իր մեջ հարմոնիկ կերպով զարգացնող նոր քաղաքացու ձևավորման գործում[4]:

2. Մանկապարտեզ-ծնող համագործակցության ժամանակակից տարբերակները

Ժամանակակից մանկավարժական գիտությունը տարբերակում է ծնողների հետ աշխատանքի կազմակերպման չորս հիմնական ձև.

- ✓ տեղեկատվական-վերլուծական,
- ✓ հանգստի,
- ✓ ճանաչողական,
- ✓ տեսողական-տեղեկատվական[5]:

Ծնողների հետ հաղորդակցության կազմակերպման *տեղեկատվական-վերլուծական* ձևերի հիմնական խնդիրն է յուրաքանչյուր սանի ընտանիքի, նրա ծնողների ընդհանուր մշակութային, կրթական մակարդակի, նրանց մանկավարժական գիտելիքների, երեխայի նկատմամբ ընտանեկան վերաբերմունքի մասին տվյալների հավաքագրումը, մշակումը և հետագա աշխատանքում օգտագործումը: Միայն վերլուծական հիմունքներով է հնարավոր նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխայի նկատմամբ ցուցաբերել անհատական, անհատականության վրա հիմնված մոտեցում, բարձրացնել երեխաների դաստիարակության և կրթական աշխատանքի արդյունավետությունը և գրագետ հաղորդակցություն կառուցել նրանց ծնողների հետ: Այս աշխատանքն իրականացվում է թեստերի, հարցաթերթիկների, հարցազրույցների, «փոստարկղերի» տեսքով:

Ժամանցային բնույթի հանդիպումները նախատեսված են դաստիարակների և ծնողների միջև ջերմ ոչ պաշտոնական հարաբերություններ հաստատելու, ինչպես նաև մեծահասակների և երեխաների միջև ավելի վստահելի հարաբերություններ հաստատելու համար: Հաղորդակման այս ձևը ներառում է համատեղ ժամանց, ընտանեկան մրցույթներ, ցուցահանդեսներ, ընտանեկան թերթերի, հավաքածուների և

---

[4] Մանկության հիմնախնդիրները ժամանակակից հայ ընտանիքում, 21-րդ դարի մարտահրավերները, կանխման և հաղթահարման ուղիները, էջ 29:

[5] Богославец Л.Г., Давыдова О.И., Майер А.А., «Работа с родителями в ДОУ» Управление ДОУ 2008г., №5, էջ 46.

թեմատիկ ալբոմների թողարկումներ, համատեղ ճամփորդություններ և էքսկուրսիաներ, «բաց դռների օրեր», «քննարկումներ» և այլն:

Դաստիարակների և ընտանիքների միջև հաղորդակցության կազմակերպման *ճանաչողական* ձևերը նախատեսված են ծնողներին ծանոթացնելու երեխաների տարիքային և հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, երեխաների դաստիարակության ռացիոնալ միջոցներին և մեթոդներին, ինչպես նաև ծնողների մոտ գործնական հմտություններ ձևավորելու համար: Դրանք անցկացվում են սեմինարների, մանկավարժական ճեպազրույցների, ոչ ավանդական ձևով հանդիպումների և խորհրդակցությունների, մանկավարժական ամսագրերի և թերթերի, մանկավարժական բովանդակությամբ խաղերի, խնդրահարույց իրավիճակների դերակատարման, ծնողների վարքագծի մեթոդների մոդելավորման, կիսվելու ձևով: Այս նպատակով կարելի է կազմակերպել «կլոր սեղան»՝ նեղ մասնագետների ներգրավմամբ, խմբային քննարկումներ, կառուցողական բանավեճեր, որոնք կօգնեն համեմատել ծնողների և դաստիարակների տեսակետները որոշակի խնդրահարույց իրավիճակների վերաբերյալ, բանավոր քննարկումներ, որոնք կբացահայտեն ընտանիքում հաղորդակցության մշակույթը և հնարավորություն կընձեռեն կրթության ու դաստիարակության այնպիսի անհատական պլանավորման, որը լավագույնս համապատասխանում է սաների ու նրանց ընտանիքների կարիքներին և ռեսուրսներին:

Անհրաժեշտ է ծնողներին պարբերաբար տեղեկացնել ու հարցնել ընտրված ռազմավարությունների արդյունավետության, ծրագրի արդյունքների և այն փոփոխությունների մասին, որոնք նրանք կցանկանային կատարել:

Դաստիարակից պահանջվում է.

- ✓ Ճանաչել և շնորհակալություն հայտնել ծնողներին իրենց երեխայի առաջադիմության գործում ունեցած եզակի ներդրման համար:
- ✓ Օգնել ծնողներին հասկանալ, որ նրանք կարող են էական դրական ազդեցություն ունենալ իրենց երեխայի կյանքի վրա:
- ✓ Ընդունել և հարգել ծնողների կարծիքն ու զգացմունքները, նույնիսկ եթե դրանք չեն համապատասխանում սեփական կարծիքին:
- ✓ Փորձել զարգացնել այն ընտանիքների մշակութային արժեքների ըմբռնումը, որոնց հետ աշխատում է:
- ✓ Փորձել միշտ լավ տրամադրություն ունենալ և հաճելի լինել շփման մեջ:

- ✓ Փորձել զգալ ծնողների հուզական վիճակը:
- ✓ Ծնողներին հնարավորություն տալ խոսել՝ առանց նրանց ընդհատելու:
- ✓ Ծնողների հետ շփվելիս լինել էմոցիոնալ հավասարակշիռ, լավ վարքագծի և տակտի օրինակ ծառայել:

Հաջող հաղորդակցության բաղադրիչները.

- ✓ կապ հաստատելու ցանկություն
- ✓ կապի նկատմամբ հետաքրքրություն
- ✓ այլ տեսակետ ընդունելու պատրաստակամություն
- ✓ հետաքրքիր նշանակալից թեմաների ընտրություն,
- ✓ տակտ, հաղորդակցման հմտություններ[6]:

Մանկավարժների և ծնողների միջև հաղորդակցության կազմակերպման տեսողական և տեղեկատվական ձևերը լուծում են ծնողներին՝ նախադպրոցական հաստատությունում երեխաների դաստիարակության պայմաններին, բովանդակությանը և մեթոդներին ծանոթացնելու խնդիրը: Դրանք հնարավորություն են տալիս ավելի ճիշտ գնահատել ուսուցիչների գործունեությունը, վերանայել տնային կրթության մեթոդներն ու տեխնիկան և ավելի օբյեկտիվ տեսնել մանկավարժների գործունեությունը: Տեսողական և տեղեկատվական ուղղությունը ներառում է՝ ծնողական անկյուններ, սլայդեր, խմբային ալբոմներ, գրադարաններ ծնողների համար, ծնողական փոստ՝ «Դուք հարցնում եք, մենք պատասխանում ենք», խորհուրդներ, առաջարկություններ, հուշագրեր ծնողների համար, տեղեկագրեր, խնդրահարույց բնույթի թեմատիկ և նպատակային թռուցիկներ՝ որոշակի գաղափարների և իրադարձությունների խթանում:

Այսպիսով, նախադպրոցական ուսումնական հաստատություն-ծնող կապը արդյունավետ կլինի, եթե կա փոխվստահություն, փոխօգնության ցանկություն և գիտակից համագործակցություն, իսկ այդ ամենը ձևավորվում են միայն հետևողական ու պարբերական, նպատակային աշխատանքի արդյունքում:

[6] Богославец Л.Г., նշվ. աշխ., էջ 54:

3. Մանկապարտեզ-ընտանիք արդյունավետ հաղորդակցման մի քանի գործնական օրինակներ

Աշխատանքի այս բաժինը նպատակ ունի ներկայացնելու նախադպրոցական ուսումնական հաստատության և ընտանիքի միջև արդյունավետ հաղորդակցման նկարագրական օրինակներ, որոնք, կարծում ենք ստացված են և նպաստել են ծնող-մանկապարտեզ կապի ամրապնդմանն ու կայուն համագործակցային միջավայրի ձևավորմանը:

Մեր փորձից ելնելով, կարող ենք ասել, որ ամենահետաքրքիր ու ոչ ֆորմալ ձևաչափը միասին իրականացված էքսկուրսիաներն ու ժամանցն է: Ծնողների հետ կազմակերպված հետաքրքիր հանդիպումները, խաղային էքսկուրսիաները, բացօթյա սեմինար-քննարկումներն ու փորձի փոխանակման ցերեկոները ստեղծում են առաջին հերթին վստահության մթնոլորտ սաների մոտ: Պարբերաբար կրկնվող նմանատիպ հանդիպումները նպաստում են սաների, վերջիններիս հմտությունների ու հնարավորությունների լիարժեք բացահայտմանը:

Ոչ պակաս հետաքրքրական է նաև ծնողների հետ ինտերակտիվ խաղերի կազմակերպումը: Ինտերակտիվ խաղը մասնակցի միջամտությունն է խմբային իրավիճակում «այստեղ և հիմա», որը կառուցում է խմբի անդամների գործունեությունը հատուկ ուսումնական նպատակին համապատասխան:

Ինտերակտիվ խաղերի պարզեցված աշխարհը մասնակիցներին թույլ է տալիս ավելի լավ իմանալ և հասկանալ երևույթների կառուցվածքը և պատճառահետևանքային կապերը, քան իրական աշխարհում: Այսպիսով, հնարավոր է սովորել ավելի արդյունավետ և հետաքրքրական դարձնել գիտելիքի ձեռք բերման պրոցեսը: Ներկայացված նկարում երեխաները անցնում էին աշխարհաճանաչողության պրոցեսը սեփական հույզերի ճանաչմա ու բացահայտման միջոցով:

Մեր փորձով կարող ենք փաստել, որ նման գործողությունների արդյունքում բարենպաստ միջավայր է ստեղծվում ծնող-ուսուցիչ շփումների ավելացման համար, ձևավորվում է ծնողների դրական վերաբերմունքը հաստատության նկատմամբ, մեծանում է ընտանեկան ժամանցի կազմակերպման անհրաժեշտությունը: Թեմատիկ գործողությունների իրականացման ընթացքում լուծվում են ընտանեկան դաստիարակության հետևյալ խնդիրները՝ երեխայի ֆիզիկական զարգացում, աշխատանքային և հայրենասիրական դաստիարակություն, էկոլոգիական մշակույթի ձևավորում, ընտանեկան կյանքի նախապատրաստում և այլն:

Նման հետաքրքիր փորձառություն ունեցել ենք նաև <<Իմ պարտեզը>> նախագծային աշխատանքի իրականացման ժամանակ՝ ավագ խմբում , երբ համատեղ աշխատանքով պետք է յուրաքանչյուր երեխա ծնողի հետ որևէ բույսի սերմ աճեցներ:

Ծնողներից պահանջվում էր 3 ամիս շարունակ, երեխայի հետ հետևել իր տնկիի աճին և յուրաքանչյուր ուրբաթ քանոնով չափումներ ու հաշվարկներ կատարել, որոնք պետք է նշվեին հատուկ նոթատետրում: Խմբում արդեն յուրաքանչյուր երեխա ներկայացնում էր այդ շաբաթ իր տնկիի հետ կատարված փոփոխությունները՝ նշելով.

- Քանի սմ աճ ունի իմ բույսը այս շաբաթ,
- Որքանով է ավել այն նախորդ շաբաթվա ցուցանիշից,
- Ինչ փոփոխություններ է կրել ծիլը,
- Ինչ է անհրաժեշտ բույսի աճի համար:

Աշխատանքի ավարտին կազմակերպեցինք ցուցահանդես, որի ընթացքում երեխաները ներկայացնում էին խնամքի ընթացքը և իրենց աշխատանքի արդյունքը:

Այսպիսի աշխատանքը առաջին հերթին նպաստում է.

- Երեխաների ճանաչողական հմտությունների զարգացմանը՝ նոր ճանաչողական գործողություններ, փորձարկումներ անկենդան ու կենդանի բնության մեջ, անընդհատ դիտումներ, հետաքրքրող հարցերի պատասխանների որոնման և նոր հարցադրումների կառուցման մի ողջ գործընթաց է իրենից ներկայացնում;
- Երեխաների գեղագիտական ունակությունների՝ բնության գեղեցկությունը, բազմատեսակ գույներն ու ձևերը տեսնելու կարողության զարգացմանը;
- Երեխաների բարոյական որակների ձևավորմանը, նրանց մեջ շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվության զարգացմանը,
- Երեխաների մոտ աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի ձևավորմանը և այլն:

Բացի այդ մեր հետազոտության թեմայի տեսանկյունից մեզ համար առավել հետաքրքրական է ծնողական համայնքի մոտ դրական վերաբերմունքի ձևավորումը, ծնող-երեխա-դաստիարակ կայուն համագործակցային կապերի զարգացմանը:

Նման գործողություններ իրականացնելու համար մանկավարժների նախապատրաստական աշխատանքները օգնում են բարելավել նրանց մասնագիտական հմտությունները, ընդլայնել առկա պատկերացումները երեխաների և ծնողների հետ աշխատելու վերաբերյալ: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների տարբեր մասնագետների ներգրավումը համագործակցության մեջ դրական է ազդում մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցների փոխգործակցության վրա:

Այսպիսի գործողությունների արդյունքում բարենպաստ միջավայր է ստեղծվում ծնող-ուսուցիչ շփումների ավելացման համար, ձևավորվում է ծնողների դրական վերաբերմունքը հաստատության նկատմամբ, մեծանում է ընտանեկան ժամանցի կազմակերպման անհրաժեշտությունը:

Նմանատիպ տնային աշխատանք-մրցույթների պատրաստման համար դաստիարակից պահանջում է.

- Թեմատիկ գործողություններ պատրաստելու, ստեղծելու և իրականացնելու ալգորիթմ.

- նպատակների և խնդիրների սահմանում,
- գործողությունների պլանի կազմում,
- երեխաների հետ աշխատանքի տարբեր ձևեր,
- համատեղ գործունեություն ծնողների և երեխաների հետ,
- իրականացված գործողությունների արդյունքում երեխաների և ծնողների խրախուսում, արդյունքների ամփոփում:

Նմանատիպ թեմատիկ գործողությունները կարող են օգտագործվել տարբեր նախադպրոցական տարիքի աշակերտների ծնողների հետ աշխատանքում, բայց դրանք հատկապես նպատակահարմար են ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ծնողների հետ ինտերակտիվ գործունեություն կազմակերպելիս:

Նախագծային նմանատիպ աշխատանքների շրջանակներում ընտանիքի և մանկապարտեզի փոխազդեցությունը երկար գործընթաց է, երկար ու տքնաջան աշխատանք, որը պահանջում է համբերություն, ստեղծագործականություն և փոխըմբռնում մանկավարժներից և ծնողներից:

Ծնողների հետ համագործակցության հետաքրքիր ու հաջողված փորձառություն է նաև ծնողական սեմինար-քննարկումների կազմակերպումը:

Նմանատիպ քննարկումներից մեկի թեման եղել է <<Գլխուղեղի մարզումը>>: Սեմինարի ընթացքում մանկավարժից հոգեբանից և լոգոպեդից բաղկացած թիմով, պատասխանելով ծնողներին հուզող հարցերին համատեղ կատարեցինք նուրբ շարժողականությունը զարգացնող վարժություններ: Այս սեմինարի ընթացքում խոսեցինք նուրբ մոտորիկայի և խոսքի միջև գոյություն ունեցող կապի մասին : Քանի որ գլխուղեղում մոտ են տեղակայված մատների նուրբ շարժունակությունն ապահովող կենտրոնը և խոսքի կենտրոնները, զարգացնելով մատների ճկունությունը՝ խթանվում է նաև խոսքի զարգացումը: Քննարկեցինք գլխուղեղի մարզմանը նպատակաուղղված վարժությունների և հիշողության, ուշադրության զարգացման կապը, անդրադարձանք գլխուղեղի կիսագնդերի փոխհամաձայնեցված աշխատանքին:

Այսպիսի աշխատանքները, կարծում ենք, հնարավորություն են ընձեռում բարձրացնել անհատական աշխատանքների որակը, փոխօգնության ու փոխգործակցության մթնոլորտ են ստեղծում:

Մանկապարտեզ- ծնողական համայնք փոխազդեցության էությունն այն է, որ երկու կողմերն էլ պետք է շահագրգռված լինեն ուսումնասիրել երեխային, բացահայտել և զարգացնել նրա մեջ լավագույն որակներն ու հատկությունները: Նման փոխգործակցությունը հիմնված է փոխադարձ վստահության և հարգանքի, փոխադարձ աջակցության և օգնության, միմյանց նկատմամբ համբերության և հանդուրժողականության սկզբունքների վրա: Դա օգնում է դաստիարակներին և ծնողներին համատեղել իրենց ջանքերը՝ երեխայի մեջ ստեղծելու այն որակներն ու հատկությունները, որոնք անհրաժեշտ են նրա ինքնորոշման և ինքնիրացման համար, հաղթահարելու դժվարությունները և ձախողման դեպքում ինքնավերականգնումը:

Ընտանիքի հետ մանկավարժի համագործակցության բնույթը կախված է ծնողների դիրքորոշումից, ովքեր տարբեր վերաբերմունք ունեն կրթօջախի, կրթության նկատմամբ, տեսնում են կամ չեն տեսնում իրենց դերը մանկավարժական խմբում դաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում, տարբեր ձևերով են դաստիարակում երեխային ընտանիքում և ունեն տարբեր ինտելեկտուալ մակարդակ: Հետևաբար, անհրաժեշտ է ընտանիքների և ծնողների հետ աշխատանքը

կառուցել տարբերակված ձևով՝ չպարտադրելով բոլորին համագործակցության նույն ձևերը, այլ կենտրոնանալով ծնողների կարիքների, ընտանիքի և ընտանեկան կրթության առանձնահատկությունների վրա՝ համբերատար ներգրավելով նրանց աշխատանքի մեջ: Կան խնդիրներ, որոնք հուզում են բոլոր ծնողներին կամ կապված են երեխաների կրթական գործունեության հետ: Նման հարցերը քննարկվում են ընդհանուր ժողովներում:

Ծնողական հանդիպումների ժամանակ ծնողները համակարգված կերպով պետք է ծանոթանան ընտանիքում և մանկապարտեղում երեխաներին դաստիարակելու և կրթելու նպատակներին և խնդիրներին, բովանդակությանը, ձևերին և մեթոդներին: Այսպիսի հանդիպումները պետք է բավարարեն ծնողի հետաքրքրությունների ողջ փունջը՝ կապված մանկապարտեզում երեխայի առօյայի և դաստիարակության կազմակերպման հետ:

Ապացուցված է, որ կրթությունը ոչ միայն մարդու զարգացման, այլև ազգային գոյատևման, ինքնության ու մարդկային առաջընթացի գրավականն է: Այն անձի ձևավորման հիմնաքարն է և իր հետևից տանում է հասարակության զարգացումը, ուստի պետք է մաքսիմալ ծրագրավորված ու նպատակային մոտենալ երեխայի դաստիարակության կարևոր գործի հետ կապված յուրաքանչյուր մանրուքի և հատկապես վերջիններիս ընտանիքների հետ համագործակցության կարևորագույն գործին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ուսումնասիրելով ընտանիք և դպրոց համագործակցության տարբեր տիպային մոդելներ, գալիս ենք այն եզրահանգման,որ երեխայի դաստիարակության և զարգացման գործում մեծ դեր են խաղում ինչպես ընտանիքը այնպես էլ նախադպրոցական ուսումնական հաստատությունը: Ընտանիքում է տեղի ունենում երեխայի սոցիալականացումը,առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի կարիքների մասին կրթում և դաստիարակում նրան, ուստի երեխայի դաստիարակությունը ավելի արդյունավետ կլինի ՆՈՒՀ և ընտանիք, ծնող և դաստիարակ համագործակցության ժամանակ: Ծնողների հետ համագործակցությունը թույլ է տալիս դաստիարակին ավելի լավ ճանաչել երեխային, իմանալ նրա նախասիրությունների մասին, ինչն էլ իր հերթին թույլ է տալիս պատկերացում կազմել երեխայի ներաշխարհի մասին: Ինչպես ծնողները այնպես էլ նախակրթարանի մանկավարժները համարվում են երեխայի դաստիարակները և երեխայի դաստիարակությունն ավելի արդյունավետ կլինի դաստիարակ-ծնող կայուն փոխհարաբերությունների ժամանակ, քանի որ մի շարք կրթական խնդիրներ լուծելիս մանկավարժն անհրաժեշտ խորհուրդներ են ստանում ծնողներից, և հակառակը:

Այսօր շատ ծնողներ սոցիալական տարբեր խնդիրների պատճառներով չեն մասնակցում իրենց երեխաների կրթական գործունեությանը, թողնելով երեխայի դաստիարակությունը կրթական հաստատոիթյունների վրա, որի ընթացքում նվազում է երեխայի հետաքրքրությունները դեպի գիտելիքը :

Ուստի կարող ենք ասել,որ ուսումնական գործընթացի հաջողությունը կախված է նրանից թե ինչպես է զարգանում հարաբերությունները դաստիարակի, սաների և ծնողների միջև, որքանով է մանկավարժը կարողանում ծնողին ներգրավել երեխայի դաստիարակությանը:

Առաջարկում ենք փոխգործակցության կոլեկտիվի, խմբային և անհատական ձևերի համադրություն: Ժամանակակից պայմաններում կրթական հաստատության դերն է ծնողների և մանկավարժների ջանքերը համատեղել սաների դաստիարակության գործում: ՆՈՒՀ-ի և ընտանիքի համագործակցությունը բարձրացնելու համար առաջարկում ենք հաճախ կազմակերպել ծնողական

շաբաթներ, որոնց ժամանակ յուրաքանչյուր ծնող կգտնի իր խնդրի սպառիչ պատասխանը, կարտահայտի իր կարծիքը, ցանկությունը, խնդրանքը:

Բացի այդ առաջարկում ենք նաև հաճախ կազմակերպել ծնողավարման հմտությունների զարգացման ու բարելավմանն ուղղված սեմինար քննարկումներ, ինչպես լսարանային և արտալսարանային, անպես էլ հեռավար ֆորմատով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Զաղոյան Ա. Մ., Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձեվավորման գործում/ Մանկավարժություն N 1 ՀՅԴ 373 Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, 2014:
2. Մանկության հիմնախնդիրները ժամանակակից հայ ընտանիքում, 21-րդ դարի մարտահրավերները, կանխման և հաղթահարման ուղիները, գիտաժողովի նյութերի ժողովածու, <<Մանկավարժ>> հրատ., Ե., 2016:
3. Богославец Л.Г., Давыдова О.И., Майер А.А., «Работа с родителями в ДОУ» Управление ДОУ 2008г., №5.